

Հարցաթերթ

Աշխարհագրություն առարկայի 2018 թ. դպրոցական օլիմպիադայի
հանրապետական փուլի
(տևողությունը՝ 150 րոպե)


10-րդ դասարան

1. Աշխարհագրական միջին լայնությունները քարտեզագրելու համար ի՞նչ պրոյեկցիա է օգտագործվում.....1 միավոր
 1. հասարակածային
 2. գլանային
 3. ազիմուտային
 4. կոնային
2. Արեգակնային համակարգի և Երկիր մոլորակի առաջացման մասին կան գիտական տարբեր վարկածներ: Գրե՛լ վարկածները և դիմացը՝ դրանց հեղինակ(ներ)ը..... 2 միավոր
3. Ո՞ր հողերն են բնորոշ մշտականաչ կոշտատերև անտառների և թփուտների զոնային.....1 միավոր
 1. անտառային գորշ
 2. դարչնագույն
 3. կարմրադեղին (լատերիտային)
 4. շագանակագույն
4. Ընտրե՛լ բնության բաղադրիչների ճիշտ գույգորդումը.....1 միավոր
 1. բարեխառն ցամաքային կլիմա – շյուղախոտ, փետրախոտ – պողոզային հող
 2. բարեխառն ծովային կլիմա – եղևնի, սոճի – անտառային գորշահող
 3. խոնավ մերձարևադարձային կլիմա – դափնի, նոճի – սևահող
 4. միջերկրածովային կլիմա – խցանակաղնի, ձիթենի – դարչնագույն հող
5. Գտնե՛լ օրինաչափությունը և կազմել համապատասխան եռյակները..... 2 միավոր

Ռուսանդա – անագի ձուլում – Համերֆեստ	Չամբիա – սուրճի մշակություն – Կիզալի
Մալայզիա – ոչխարաբուծություն – Փոթոսի	Բոլիվիա – հեռային մշակություն – Լիբրևիլ
Նորվեգիա – պղնձաձուլություն – Կոնյա	Գարոն – այծաբուծություն – Իպոխ
Մոնղոլիա – փայտաստղոցում – Էրդենետ	Թուրքիա – ջրաէներգետիկա – Նդուլա
6. Շարքից ընտրե՛լ այն քաղաքները, որոնք մտնում են Բոսվաշ մեզալպոլիսի մեջ.....1 միավոր
Չիկագո, Բոստոն, Նյու – Յորք, Փիթսբուրգ, Ֆիլադելֆիա, Միեթլ, Նոր Օռլեան, Վաշինգտոն, Բալթիմոր, Միլուոկի
7. Ի՞նչ կլիմի էթե ՀՀ տարածքում օդի ջերմաստիճանը բարձրանա 2 -3⁰-ով, իսկ մթնոլորտային տեղումների քանակը նվազի 15 – 20 % -ով (նշել 8 հետևանք)..... 2 միավոր
8. Լեռան գագաթին մթնոլորտային ճնշումը 400 մմ է, օդի ջերմաստիճանը՝ - 4⁰, իսկ ստորոտին՝ + 10⁰ (հաշվարկը կատարել 5⁰ - ով): Որոշել..... 2 միավոր
 1. լեռան հարաբերական բարձրությունը,
 2. մթնոլորտային ճնշումը ստորոտին:
9. Երկրի բնակչության թիվը 3 մլն է, բնական աճը՝ 6‰, մահացության ցուցանիշը՝ 3‰: Որոշել..... 2 միավոր
 1. բնակչության տարեկան բացարձակ բնական աճը,
 2. բնակչության տարեկան բացարձակ մահացությունը:
10. Երկրի տարեկան պտույտի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
 1. Հյուսիսային կիսագնդում ամենաերկար ցերեկը դիտվում է մարտի 21 - ին:
 2. 2034 թվականը կլինի նահանջ տարի:
 3. Երկիրն Արեգակի շուրջը պտտվում է 265 օր 6 ժամում:
 4. Ուղեծիրը Երկրի պտույտի ճանապարհն է Արեգակի շուրջ:
 5. Երկիրը մերձակետում լինում է հուլիսի 5 – ին, իսկ հեռակետում՝ հունվարի 3 –ին:
 6. Հարավային կիսագունդն ավելի շատ ջերմություն է ստանում, քան հյուսիսայինը:
11. Գրե՛լ այն ապարների համարները, որոնք ունեն օրգանական նստվածքային ծագում.....1 միավոր

1. ավազ	2. տորֆ	3. կրաքար	4. կերակրի աղ
5. մարմար	6. քարածուխ	7. պեոլիտ	8. այրվող թերթաքար

12. ՀՀ տնտեսության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
1. Գլխավոր առանձնահատկությունը ռեսուրսատար ճյուղերի զարգացումն է:
 2. Սպասարկման ոլորտը նյութական արտադրության ոլորտից ավելի արագ է զարգանում:
 3. ՀՆԱ-ի կառուցվածքում ամենամեծը տրանսպորտի և կապի բաժինն է:
 4. Էլեկտրաէներգիայի կառուցվածքում ամենամեծը ջրաէլեկտրակայանների բաժինն է:
 5. Զարգացած են քիչ մետաղատար և շատ աշխատատար ճյուղերը:
 6. Մեքենաշինության տեղաբաշխումն ամբողջությամբ համընկնում է գունավոր մետաղաձուլության տեղաբաշխման հետ:
13. Լրացնե՛լ բաց թողնված պունակները համապատասխան ճյուղերով..... 2 միավոր



Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Ա. Թ. Գրիգորյան